

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի մարտի 12-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 19-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում գրական-երաժշտական երեկույթ՝ նվիրված Հայ Եկեղեցու բազմավաստակ Հայրապետ Մկրտիչ Խրիմյան Հայրիկի կյանքին, գործունեությանը և գրական վաստակին:

Երեկոն կազմակերպել էին հոգևոր ճեմարանի ուսանողները:

Երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ներկա էին նաև Տ. Հուսիկ, Տ. Արսեն, Տ. Նարեկ, Տ. Գևորգ սրբազանները, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը և այլ հյուրեր:

Երեկոյին ներկա էր նաև հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Բեռլինի Հումբոլդի անվան համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի պրոֆեսոր, դոկտոր Գերհարդ Բասարակը՝ իր տիկնոջ հետ:

Երեկույթը ներածական խոսքով բաց է անում հոգևոր ճեմարանի ընդհանուր դաստիարակ Տ. Ստեփանոս աբդ. Չաքալյանը:

Ապա բանախոսությամբ հանդես է գալիս հոգևոր ճեմարանի Ա լսարանի ուսանող, ուրարակիր Հակոբ Մարտիրոսյանը, որը, հանգամանորեն ներկայացնելով Խրիմյան Հայրիկի կյանքն ու գործունեությունը և նրա գրական ժառանգությունը, վեկուցման ավարտին եզրակացնում է ասելով.

«Խրիմյան Հայրիկը ԺԹ դարի վերջերին մեր եկեղեցական ու ազգային տարեգրության մեծագույն դեմքերից մեկն էր, որն իր գործունեությամբ իր անհատականության դրոշմն է դրել հայ կյանքի վրա, իբրև հայ մարդ, հոգևորական, հասարակական, եկեղեցական-ազգային գործիչ, ուսուցիչ և հրապարակախոս: Նա ոսկեձույլ մի ամբողջություն էր՝ դուրս եկած հայ ժողովրդի ծոցից: Խրիմյանը խորունկ մի խորհուրդ էր, աստվածաշնչական մի անձնավորություն, մի ամբողջ ժամանակաշրջան ու մի ամբողջ մշտայնություն»:

Բանախոսությունից հետո սկսվում է երեկոյի գեղարվեստական մասը: Ա լսարանի ուսանող, ուրարակիր Թորոս Մենենկիչյանը արտասանում է Պետրոս Դուրյանի «Հայրիկին» բանաստեղծությունը: Իսկ նախապատրաստական դասարանի ուսանող Վազգեն Բերբերյանը արտասանում է հատված բանաստեղծ Վաչագան Հովհաննիսյանի «Հայրը» պոեմից:

Այնուհետև հոգևոր ճեմարանի երգչախումբը, ղեկավարությամբ երաժշտության դասախոս Տ. Ղևոնդ քհն. Հարությունյանի, կատարում է «Եկել է գարուն», «Հայրիկ, հայրիկ...» և «Վասպուրական» խմբերգերը:

БИБЛИОТЕКА Ак. Наук

Երեկոյի գեղարվեստական բաժնի վերջում հոգևոր ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս Բաբգեն Ներսիսյանի՝ Խրիմյան Հայրիկի ստեղծագործությունների հիման վրա կազմած գրական ասքի (կոմպոզիցիա) կատարմամբ հանդես են գալիս ճեմարանի մի խումբ ուսանողներ:

Ապա ուսանողներին ողջույնի իր խոսքն է ասում երեկոյի հյուր պրոֆեսոր, դոկտոր Գերհարդ Բասարակը:

Երեկույթը, որն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով, մի նոր ու սրտագին տուրք էր Հայ Եկեղեցու մեծավանուտակ կաթողիկոսի և Վասպուրականի մեծ կավակի արժեքավոր վաստակին:

Հավետ փա՛ռք Խրիմյան Հայրիկի անմահ հիշատակին: